ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

ՄԻՖԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ *

ՀՏԴ 070 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-130*

ԼԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
martirosanliana413@gmail.com
ORCID: 0009-0009-6009-4604

Առասպելական մտածողությունը մարդկության պատմության անբաժան ուղեկիցն է և հատուկ է մարդկային ցեղի քաղաքակրթական զարգացման պատմության բոլոր շրջաններին: Քաղաքակրթական փոփոխությունները, տեղեկատվական հասարակության ձևավորումը, արդիական տեխնոլոգիաների զարգացումը անհատներին ոչ միայն չեն ազատել մոգականացման պատրանքներից, այլև սկսել են միտումնավոր կիրառվել նրանց կողմից տեղեկատվական, հիբրիդային պատերազմների և քաղաքական մրցակցության ընթացքում:

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում բացահայտելու քաղաքական միֆերի դերն ու կիրառական նշանակությունը մերօրյա քաղաքական կյանքում:

Աշխատանքի խնդիրը տարբեր գիտական ուղղությունների ուսումնասիրության հիման վրա քաղաքական միֆերի կիրառման անհրաժեշտության հիմնավորումն է:

Աշխատանքը շարադրված է փաստերի համադրական քննությամբ, պատմաքննական վերլուծության, համեմատության և հակադրության սկզբունքների կիրառմամբ:

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է պնդել, որ քաղաքական միֆերը, չնայած տեղեկատվական առաջընթացին և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, չեն կորցրել իրենց արդիականությունը: Դրանք ակտիվորեն կիրառվում են մերօրյա քաղաքական կյանքում: Միֆականացման գործընթացը, ունենալով բարդ և բազմաշերտ կառուցվածք, իր հետ բերում է նոր մարտահրավերներ և դրա ստեղծմամբ զբաղվող մասնագետներին ստիպում մշակել նոր ռազմավարություն, որի շնորհիվ կստեղծվեն ոչ միայն միֆերն արդյունավետ կիրառելու բավականաչափ հմտություններ, այլև դրանց հակազդելու նոր եղանակներ և մեխանիզմներ:

Հիմնաբառեր՝ *Քաղաքական միֆեր, ծես, առասպել, քաղաքական տեխնոլոգիա, մանիպուլյացիա, իրականություն, արքետիպ:*

---

* Հոդվածը ներկայացվել է 15.06.2023թ., գրախոսվել՝ 06.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

Նախաբան

Միֆերի գոյության իմաստի փնտրտուքն ունի խոր արմատներ: Ավելի քան երկու հազարամյակ համաշխարհային պատմության և քաղաքակրթության մեջ հետազոտողները փորձել են բացահայտել այն՝ համարելով մարդու երևակայության ազատ խաղի արդյունք: Դրանց էությունը բացահայտվել է հոգեբանության, մշակույթի, արվեստի, կրոնի, փիլիսոփայության և գիտական այլ շրջանակներում, որոնցից յուրաքանչյուրը յուրովի տարբեր հատկություններով է օժտել այն:

Աշխարհապատկերման և նոր իրականության կառուցարկման առասպելականացված բովանդակությունը բնորոշ է ինչպես նախնադարյան, միջնադարյան հասարակություններին, այնպես էլ լուսավորության դարաշրջանի ծնունդ համարվող ժամանակակից մարդուն, քանի որ նրա գիտակցականում մշտապես համադրվում և հակադրվում են ռացիոնալն ու իռացիոնալը: 21-րդ դարում միֆերի գոյությունը նոր իմաստ է ստանում: Այսօր ամբոխի մարդու «ճշմարտությունը» առասպելն է: Եվ այդ պատճառով ամբոխի մարդու կառավարումը տեղի է ունենում արքետիպային, նախնադարյան հոգեկան կառուցվածքների վրա ներազդելու միջոցով (Բաբաջանյան 12): Սակայն եթե նախկինում միֆերը համարվում էին մարդու անգիտակից գործունեության արդյունք, որոնք առաջանում էին ինքնաբուխ կերպով, ապա այսօր դրանք ստեղծվում են նախապես մշակված պլանի համապատասխան՝ հմուտ «վարպետների» կողմից (Кассирер 581):

Միֆի եզրաբանական և իմաստաբանական նշանակությունը պատմության մեջ

«Միֆ» եզրույթի ստուգաբանությունը գալիս է հին հունարեն «mythos» բառից, որը թարգմանաբար նշանակում է բառ, խոսք, ժողովրդական վիպական ժանր, որի մեջ գերբնական և չափազանցված ձևով արտացոլվել են աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ըմբռնումները (Զրբաշյան և Մախչանյան 26)[1]: Սակայն ոչ բոլոր տեսաբաններն են համաձայն այս ձևակերպմանը: 20-րդ դարի նեոմիֆոլոգիզմը երկփեղկվում էր երկու տեսակետի մեջ. փիլիսոփաների մի մասը համարում էր, որ միֆն ունի իռացիոնալիստական, ոչ իրական բնություն: Ա. Սեմիրջյանը իր «Միֆը 20-րդ դարի գրականության մեջ» աշխատությունում հիշատակում է 18-րդ դարի փիլիսոփա Ջանբատիստ Վիկոյի տեսությունը միֆերի մասին, որտեղ դրանք ներկայացվում են որպես նախամարդու զգայական և ֆանտաստիկ մտածողության արդյունք, քանի որ, ըստ գիտնականի, նախամարդը զուրկ էր բանականությունից, բայց տիրապետում էր ուժեղ զգացողությունների և հզոր երևակայության (Սեմիրջյան 4): Նրան հակադրվել են մի շարք տեսաբաններ՝ պնդելով, որ միֆն իրականություն է, պարզապես արտահայտված է այլաբանորեն: «Միֆը հենց միֆի տեսանկյունից ամենաբարձր, ամենակոնկրետ և մաքսիմում իրականություն է», համոզված էր ռուս տեսաբան Ա. Լոսևը (Лосев 35): Չնայած գաղափարական պայքարին՝ երկու տեսությունների հետևորդներն էլ հակվում են մեկ ընդհանուր մտքի՝ միֆը թույլ է տալիս իրականությունը ներկայացնել ոչ թե օբյեկտիվ, այլ շահավետ, ցանկալի տեսանկյունից:

Միֆերը որպես դիալեկտիկական կատեգորիաներ իրենց ուսումնասիրության գագաթնակետին հասան 19-րդ դարավերջին, 20-րդ դարասկզբին: Ֆրանսիացի փիլիսոփա, յունգյան դպրոցի ներկայացուցիչ Միրչա Էլիադեն, միֆերի խորքային ուսումնասիրության արդյունքում համոզվել էր, որ միֆն առաջին հայացքից

[1] Հայոց լեզվում հաճախ նույնանում են «միֆ» և «առասպել» եզրույթները: Երկու եզրույթների զուգահեռ կիրառմանը հակադարձում է գրականագետ Վ. Ռուդնևը՝ տալով միֆ բառի երեք հիմնական հատկանիշները՝ հնագույն պատմություն, ավանդություն, միֆաստեղծում, միֆաարարում, միֆոլոգիական կոսմոգենեզ, գիտակցության հատուկ վիճակ՝ մշակութաբանորեն և պատմականորեն պայմանավորված ու հիմնավորված: Այս իմաստով հեռանում են «միֆ» և «առասպել» հասկացությունները: Սակայն հոդվածում երկու եզրույթների զուգահեռ կիրառումով մենք նկատի ենք առնում նույն հասկացությունները:

գերբնական ուժերի սխրագործությունների մասին պատմություն է, որը կտրված է իրականությունից: Սակայն սա միայն առաջին հայացքից, քանի որ միֆերի ավելի խոր ուսումնասիրությունները բացահայտում են, որ դրանք իրականում «ճշմարտություններ են, պարզապես պատված են գերբնական քողով» (Элиаде 53): Որքան շատ են միֆերի մասին սահմանումներն ու բնութագրումները, նույնքան շատ են դրանց տեսակավորման մասին հետազոտությունները: Միֆերը կարելի է դասակարգել ըստ իրենց ազդեցության ժամանակահատվածի, ըստ իմաստի և ազդեցության տիրույթի, ինչպես նաև ըստ բովանդակության և նպատակի: Ըստ ազդեցության ժամանակահատվածի՝ միֆերը լինում են երկու տեսակի՝ կարճաժամկետ միֆեր, որոնց ազդեցությունը անհամեմատ կարճ է և անցողիկ, և երկարաժամկետ միֆեր, որոնց հիմքում ընկած են արքետիպերը: Կարճաժամկետ միֆերն ընդունված է անվանել նաև տեխնոլոգիական միֆեր, որոնց կյանքը կարճատև է, քանի որ դրանք հիմնվում են հասարակական գիտակցության կոնյունկտուրային փոփոխությունների և հուզական պոռթկումների վրա՝ չդիպչելով ենթագիտակցության խոր շերտերին (Հովհաննիսյան 123): Ի հեճուկս սրանց՝ կան նաև երկարաժամկետ միֆեր, որոնք անվանում ենք արքետիպեր: Եթե բանական գիտակցականը «աշխատում» է բանականության մտակառույցների միջոցով, ապա կոլեկտիվ անգիտակցականը արտահայտվում է արքետիպերի տեսքով (Բաբաջանյան 9): Կան այլ տեսակի միֆեր ևս, որոնք կարելի է անվանել «հավերժական»: Դրանք նույնպես հիմնվում են արքետիպերի վրա, և գործնականում հնարավոր չէ վերացնել, քանի որ արմատացած են տվյալ ազգի մտածողության մեջ: Դրանք կարելի է արդիականացնել, այսինքն՝ կյանքի կոչել, կամ էլ կրկին «քշել» ենթագիտակցության խորքերը՝ նրանց առջև հզոր պատվար դնելով (Հովհաննիսյան 124): Կան միֆերի դասակարգման այլ մոտեցումներ ևս:

Միֆերը, լինելով անհատի մտածողության անօտարելի ձևեր, դրսևորվում են ժամանակակից մշակույթում, առօրյա շփման, սոցիալական հարաբերություններում: Սակայն ոլորտը, որն իր վրա է կրում միֆերի կիրառելիության մեծ չափաբաժինը, քաղաքականությունն է: Քաղաքական են համարվում այն միֆերը, որոնք օգտագործվում են քաղաքական նպատակներով՝ պայքար իշխանության համար, իշխանության պահպանում կամ լեգիտիմացում, ստեղծված իրավիճակների և խնդիրների արդարացում, նոր իրականության կառուցարկում:

Ի տարբերություն մշակութային կամ այլ տեսակի միֆերի՝ քաղաքական միֆերի նպատակը որոշակի խմբերի կամ անհատների շոշափելի նյութական շահերը պաշտպանելն է (Մելքոնյան 61): Ըստ ֆրանսիացի հետազոտող Ռ. Ժիրարդեի՝ քաղաքական միֆերը լինում են չորս տեսակի՝ դավադրություն, ոսկե դար, հերոս-փրկիչ և միասնականություն (Жирарде 53): Այս առումով նշենք, որ միֆերը արքետիպային նախահիմք և սոցիալական բնույթ ունեցող պատումներ են, որոնք, լինելով աննյութականացված կոլեկտիվ անգիտակցականի արտահայտման եղանակներ, միտված են ներկայացնելու իրականությունը: Յուրաքանչյուր միֆ ունի իր սոցիալական նախատիպը, քանի որ բոլոր նոր միֆերը հին միֆերի կրկնությունները կամ վերապրուկներն են (Элиаде 30): Տեղայնացնենք Ռ. Ժիրարդեի առաջ քաշած գաղափարը՝ որպես օրինակ դիտարկելով ՀՀ-ում տեղի ունեցած նախագահական առաջին ընտրություններին նախորդած գործընթացները, քանի որ այդ ընտրությունները համարվում են միֆաստեղծման ամենից արդյունավետ ժամանակահատվածը, քանզի հասարակությունը կանգնած էր ոչ միայն անհատական ընտրության, այլև կյանքի մշակույթի փոփոխության առջև:

Քաղաքական միֆերը ընտրական գործընթացներում

Ընտրությունները, լինելով ժամանակակից քաղաքականության կարևորագույն բաղադրիչներ, ինչպես նաև ժողովրդավարական համակարգի անբաժանելի տարրեր, այսօր քաղաքացիների քաղաքական կամքի արտահայտման օգնությամբ դառնում են

իշխանության և կառավարման մարմինների ձևավորման միջոց: Իրենց տեսակի մեջ եզակի են նախագահական ընտրությունները, քանի որ հասարակության հույսը հաճախ կապվում է անձերի հետ, ըստ այդմ էլ սպասելիքներն ու հիասթափությունները հիմնականում լինում են նախագահական ընտրություններից:

Հայ ժողովրդին սեփական կամքին համապատասխան քաղաքական իրականություն կառուցելու հնարավորություն առաջին անգամ տրվեց 1991 թվականին՝ առաջին նախագահական ընտրությունների ժամանակ: Չնայած բուն ընտրությունները տեղի ունեցան 1991-ին, սակայն հին կարգերի մերժման և նորի կառուցման մեկնարկը տրվել էր տարիներ առաջ:

1991 թվականին ձեռք բերված անկախությունը հայ ժողովրդի միակ ձեռքբերումը չէր: Հայաստանում ժողովրդավարական ճանապարհով ձևավորվում էր նոր իշխանություն, որի հիմքում ընկնում էր բազմակուսակցական նոր համակարգ, որի վերջնարդյունքը գործադիր և օրենսդիր իշխանությունների տարանջատումն էր: Հայաստանյան քաղաքական ընտրախավը հարցի լուծումը տեսավ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնի ներմուծման ճանապարհով: Ներմուծվեց նախագահի ինստիտուտը՝ իր հետ բերելով բնական պայքարի առաջացման նոր և նախադեպային մարտահրավերներ: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ պատմական այս ժամանակահատվածը լի է քաղաքական միֆերով:

Ըստ արքետիպային միֆամտածողության՝ առաջին փուլը, որով պետք է անցնի իշխանական էլիտան իշխանության հասնելու ճանապարհին, դավադրությունն է: Թշնամու կերպարի ստեղծումը և նրա ունեցած դավադրական գաղափարների մատնանշումը տալիս է միֆաստեղծման մեկնարկը: Եթե նախքան անկախության հանրաքվեն թշնամու կերպարում հանդես էր գալիս ոչ թե որևէ անհատ, այլ գաղափարախոսություն՝ նախկին, իրենց սպառած և լճացած խորհրդային կարգերի մերժումը, ապա անկախացումից հետո թշնամու կերպարը անձնավորվեց՝ հանձին մի շարք գործիչների: Նախագահի թեկնածու, «Հայոց համազգային շարժում» կուսակցության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա համախոհների համար թշնամին մյուս թեկնածուներն էին, մասնավորապես «Ազգային ինքնորոշում միավորում» կուսակցության առաջնորդ Պարույր Հայրիկյանը, քանի որ հիմնական ընտրական պայքարը ծավալվում էր հենց նրանց միջև: Հարկ ենք համարում ընդգծել, որ «թշնամի» բառի ներքո նկատի է առնվում գաղափարապես հակադիր ուժերի, որոնք կարող են մրցակցություն առաջացնել ընտրապայքարում: Համապատաս-խանաբար մնացած թեկնածուների համար որպես հակահերոս հանդես էին գալիս այսպես ասած «լևոնականները», որոնք հավակնում էին գալ իշխանության՝ վերցնելով հասարակության վստահության քվեն: Առհասարակ քաղաքական միֆը հակասությունների համատեքստում է, քանի որ միայն հիմնվելով դիխոտոմիաների վրա՝ կարելի է կատարել հասարակության շերտազատում՝ առաջ մղելով «մենք»-ի և «նրանք»-ի գաղափարը:

Դավադրության միջավայրի և գաղափարական հակասությունների ֆոնին ձևավորվում էր հերոսի կերպարը, որ պետք է հանդես գար որպես փրկիչ և առաջնորդեր ձևավորված շարժումը: Ընտրությունների արդյունքները կարող են փաստել, որ այս պարագայում հիմնականում հերոսի կերպարում հանդես էր գալիս Լևոն Տեր-Պետրոսյանը, որի քաղաքական իմիջը այդ ժամանակահատվածում անհամեմատ բարձ էր գնահատվում: Ըստ արքետիպային միֆամտածողության՝ հերոսը պետք է հանդես գա միասնականության կոչերով, ինչին հետամուտ էր լինում Լ. Տեր-Պետրոսյանը: Թեև նա հանդես չեկավ ակտիվ նախընտրական քարոզարշավով, սակայն բոլոր հարցազրույցների ժամանակ կարմիր թելով անցկացնում էր այն միտքը, որ միայն միասնականության և իրենց քաղաքական թիմին աջակցությունն ցուցաբերելու միջոցով է հնարավոր բերել երկար սպասված «ոսկե դարը»: Ոսկե դարի արքետիպը համարվում է քաղաքական առասպելի կայացման վերջին փուլը: Այն ենթադրում է որոշակի քաղաքական խոստում: Որպես կանոն, ոսկե դարի միֆը կա՛մ

փորձում է վերադարձնել փառավոր անցյալ, կա՛մ խոստանում է տանել անհոգ ապագա: Այս պարագայում մենք գործ ունենք ապագայապաշտական մոտեցման հետ: Այսպիսով, օգտագործելով որոշակի արքետիպեր՝ քաղաքական ուժերը կարողացան կայացնել իրենց միֆը և որպես վերջնարդյունք՝ հաջողեցին ընտրապայքարում՝ ստանալով իշխանական բոլոր լծակները: Դժվար է պնդել, որ հաղթանակը կապվում էր միայն միֆերի հետ, սակայն անհերքելի է այն փաստը, որ արքետիպերի միջոցով ստեղծված միֆերը միայն նպաստում էին հաճախ թաքնված քաղաքական քայլերի իրագործմանը:

Եզրակացություն

Ի մի բերելով մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները՝ կարող ենք եզրակացնել՝ ժամանակակից սոցիոմշակութային իրականության կառուցարկման կամ վերաիմաստավորման գործում կարևոր նշանակություն ունեն կոլեկտիվ գիտակցության նախահիմք համարվող միֆերը, որոնք, առասպելականացնելով իրականությունը, մեկնում և բացատրում են այն՝ տալով նոր բովանդակություն և իմաստ: Միֆերի ազդեցությունն առավել խորանում է ճգնաժամային հասարակություններում, երբ լուսավորության գաղափարներից ծնունդ առած մարդու գիտակցությունը փակուղի է մտնում, և կա իրականությունը մոգականության քողով պատելու խնդիր: Միֆերի և առասպելների ուսումնասիրությունը հետաքրքրել է բազմաթիվ հետազոտողների: Նրանց գաղափարախոսությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգել մեկ ընդհանուր մտքի՝ միֆերը տալիս են կյանքի կազմակերպման նոր համակարգ՝ պարտադրելով աշխարհապատկերման և կենսագործունեության նոր տրամաբանություն: Չնայած աշխարհի իմաստավորման և յուրացման գործառույթ իրականացնող միֆերը վաղեմի պատմություն ունեն, բայց այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և շարունակում են գտնվել տեսաբանների հետազոտական սեղաններին: Սա է թելադրում նաև մերօրյա քաղաքական դաշտը: Միֆերի կիրառումը ակտիվանում է ընտրությունների ժամանակ: Հայկական իրականության մեջ միֆերի կիրառման բազում օրինակներ կարելի է գտնել նախագահական առաջին ընտրություններում, քանի որ հայ ժողովուրդը ոչ միայն փոխում էր իր պատմական զարգացման ընթացքը, այլև որոշում էր, թե ում պետք է հանձնի նորանկախ պետության կառավարման ղեկը: Ինչպես ցանկացած պատմական իրողություն, այնպես էլ անկախության տրման գործընթացը լի էր իրարամերժ իրավիճակներով, որոնց արդյունքում քաղաքական թատերաբեմ էին նետվում բազում քաղաքական միֆեր, կործանվում էր հինը, իսկ նորը մշուշոտ էր և չառարկայացած: Երբ մարդկային գիտակցությունը մտնում է փակուղի, սկսում է գործել երևակայությունը, որը ձեռնամուխ է լինում տարբեր միֆերի ստեղծման, սակայն ոչ այս պարագայում, քանի որ տեղեկատվական դատարկը լցվում էր ոչ թե պատահական, այլ նախապես մշակված, փաթեթավորված միֆերով, որոնք անժխտելի է՝ թողեցին իրենց ազդեցության կնքիը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաբաջանյան, Լևոն. «Առասպելը որպես ամբոխի մարդու սոցիոմշակութային իրականության կառուցարկման գործիք», *Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, № 3 (18),* Երևան, 2015, էջ 9-12:
2. Հովհաննիսյան, Վլադիմիր. «Քաղաքական միֆերը որպես տեղեկատվական պատերազմների միջոց», *21-րդ դար, թիվ 3,* Երևան, 2008, էջ 124:
3. Մելքոնյան, Նվարդ. «ԶԼՄ-ում կիրառվող մանիպուլացիոն հնարներն ու սոցիալ-հոգեբանական ազդեցության մեխանիզմները», *21-րդ դար, Նորավանք գիտակրթական հիմնադրամի հանդես, № 5 (63*), Երևան, 2015, էջ 61:

4. Ջրբաշյան, Էդուարդ և Մախչանյան, Հենրիկ, «Գրականագիտական բառարան», «*Լույս» հրատ*., Երևան, 1972, էջ 26:

5. Սեմիրջյան, Ալվարդ, «Միֆը 20-րդ դարի գրականության մեջ», *«ԵՊՀ» հրատ*., Երևան, 2015, էջ 4:

6. Жирарде, Рауль, «Политические мифы и мифологии. Политическая наука». *Теоретико-методологические и историко-культурные исследования*. Москва., 1996, стр. 47-54.

7. Кассирер, Эрнст. «Техника современных политических мифов», изд-во. Йельского университета. Москва., 2013. стр. 277–296.

8. Кольев, Андрей. *Политическая мифология*. Москва, «Логос», 2003, стр. 126-128.

9. Лосев, Алексей. *Диалектика мифа.* Москва, «Правда», 1990, стр. 35.

10. Цуладзе, Автандил, «Политическая мифология». Москва *«ЭСКМО»,* 2003, стр. 383.

11. Элиаде, Мирча. «Аспекты мифа». Москва, «Академический проект», 2010, стр. 53.

WORKS CITED

1. Babajanyan, Levon. Ar'aspely' vorpes amboxi mardu sociomshakut'ayin irakanut'yan karucarkman gorc'iq. [The Myth as a Means of Construction of Social-Cultural Reality of the Man of the Crowd] 2015. (In Armenian).

2. Girardet, Raul. Politicheskie mify I mifologii. Politicheskaya nauka,[Political Myths and Mythologies. Political Science] 1996. (In Russian)

3. Hovhannisyan, Vladimir. Qaghaqakan mifery' vorpes teghekatvakan paterazmneri mijoc, [Political Myths as Means of Information War] 2008. (In Armenian)

4. Jeliade, Mircha. Aspekty mifa. [Aspects of Myth] 2010. (In Russian)

5. Jrbashyan, E'duard, Maxchanyan Henrik, Grakanagitakan bar'aran. [Literary Dictionary] 1972. (In Armenian)

6. Kassirer, Jernest. Texnika sovremennix mifov. [The Technique of Modern Political Myths] 2013. (In Russian)

7. Losev, Aleksej. Dialektika mifa. [Dialectic of Myth] 1990 (In Russian)

8. Melqonyan, Nvard. ZLM-um kirarvox manipulyacion hnarnern u social-hogebanakan azdecutyan mexanizmney [Manipulative Techniques and Mechanisms for Socio-Psychological Influence through Media] 2015. (In Armenian)

9. Semirjyan, Alvard. Mify 20-rd dari grakanutyan mej [Myth in the 20th Century Literature] 2015. (In Armenian)

MYTHS AS MECHANISMS OF THE CONSTRUCTION OF POLITICAL REALITY

LIANA MARTIROSYAN

Yerevan State University, Faculty of Journalism,
Chair of Communication and New Media, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

Mythological thinking is an inseparable companion of human history and is specific to all periods of the history of the civilizational development of the human race. Civilizational changes, the formation of information society, the development of modern technologies not only did not free individuals from the illusions of magic, but also began to be deliberately applied by them in the course of information, hybrid wars and political competition.

The purpose of this article is to reveal the role and practical significance of political myths in today's political life.

The task of the work is to justify the need for the applicability of political myths based on the study of different scientific directions.

The work is written by a combined examination of the facts, applying the principles of historical analysis, comparison and contrast.

As a result of the conducted study, it can be claimed that political myths, despite information progress and the formation of civil society, have not lost their relevance. They are actively used in today's political life. The process of mythification, having a complex and multi-layered structure, brings with it new challenges and forces the specialists engaged in its creation to develop a new strategy, thanks to which not only enough skills to effectively apply myths will be created, but also new ways and mechanisms to counteract them.

Keywords: *Political myths, ritual, myth, political technology, manipulation, reality, archetype.*

МИФ КАК МЕХАНИЗМ КОНСТРУИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ РЕАЛЬНОСТИ

ЛИАНА МАРТИРОСЯН
аспирант кафедры новых медиа и коммуникаций факультета журналистики Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Мифологическое мышление является неотъемлемым спутником человеческой истории и характерно для всех периодов истории цивилизационного развития человечества. Цивилизационные изменения, становление информационного общества, развитие современных технологий не только не освободили индивида от иллюзий магии, но и стали целенаправленно применяться им в ходе информационных, гибридных войн и политической конкуренции.

Цель данной статьи – раскрыть роль и практическое значение политических мифов в современной политической жизни.

Задача работы – обосновать необходимость применимости политических мифов на основе изучения различных научных направлений

Работа написана на основе фактического сопоставления и анализа, а также с применением принципов исторического анализа, сравнения и противопоставления.

В результате проведенного исследования можно утверждать, что политические мифы, несмотря на информационный прогресс и становление гражданского общества, не утратили своей актуальности. Они активно используются в современной политической жизни. Процесс мифотворчества, имея сложную и многослойную структуру, несет с собой новые вызовы и заставляет специалистов, занимающихся его созданием, разрабатывать новую стратегию, благодаря которой будет создано не только достаточное количество навыков для эффективного применения мифов, но и новые способы и механизмы противодействия им.

Ключевые слова: *политические мифы, ритуал, миф, политическая технология, манипуляция, реальность, архетип.*